

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Բաճապիր. գիտ. քեկնածու Լ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ռափայել Պատկանյանի ստեղծագործությունը հայ նոր գրականության պատմության բացառիկ նշանակալի երևույթներից է: Ըր ժամանակի և հետագա տարիների հայ հասարակական կյանքում այն ունեցավ եղակի լայնության ազդեցության ուժը, շնորհիվ իր ոգեշունչ հայրենասիրության՝ պոեզիայի «ռազմի քնար» նշանաբանով: Բաֆֆու հետ միասին, Պատկանյանը ժամանակի ամենահանրաճանաչ հեղինակն էր, հասարակության, ժողովրդի ամենանվիրական իղձերի ու զգացումների արտահայտիչը: Ահա թե ինչու միանգամայն օրինաչափ է այն հետաքրքրությունը, որ ցուցաբերում էր հայ քննադատական միտքը Ռ. Պատկանյան—Գամառ-Քաթիպայի ստեղծագործության հանդեպ: Այդ հետաքրքրությունն ու որոշակի գնահատական-կարծիքներն ի հայտ եկան գրողի առաջին փորձերի երևան գալու հետ և շարունակվեցին ու խորացան նրա ողջ կյանքի ընթացքում ու մահվանից հետո:

Ռ. Պատկանյանի գրական գործունեության առաջին նշանակալի քայլերը, ինչպես հայտնի է, վերաբերում են «Գամառ-Քաթիպայի արձակ և շափաբերական շարադրությունների» տետրերի հրատարակությանը: Դրան զուգահեռ, 1856 թ. լույս են տեսնում նրա կազմած «Ազգային երգարան հայոց» ժողովածուն, «Նոր այբբենարան հայոց» դասագիրքը և «Ռոբինզոն Կրուզոյի»՝ 1857-ին տպագրված թարգմանությունը: Հենց այս գործերն էին, որ չվրիպեցին գրող, քննադատ-հրապարակախոս Միքայել Նալբանդյանի ուշադրությունից: Ելնելով ազգային բովանդակություն և ձև ունեցող գրականության ժողովրդային ուղղության շափանիշներից, Նալբանդյանը բարձր էր գնահատում Պատկանյանի «Ազգային երգարանը»: «Մի օրինավոր հայոց երգարան, առաջին անգամ տպվեցավ Պետերբուրգ պ. Գամառ-Քաթիպայի աշխատությամբ: ...Շնորհակալություն պ. Գամառ-Քաթիպային, գուցե այսուհետև հայերի ուրախությունը կամ տրտմությունը հայտնող երգերը լինին աղգի սրտի և հոգու բխվածք...»¹:

Նույն ժողովածուի հարցին Նալբանդյանն անդրադառնում է նաև «Մեռելաճարցուկ» վեպում: Ազգային երգի և գրականության մասին խոսելիս «Տե՛ր, կեցցո դու զհայս» և Աբովյանի «Վերքի» հետ միասին նշվում է և նոր լույս տեսած «Ազգային երգարանը»: Նալբանդյանը գնահատում էր Պատկանյանի գործը ժամանակի առաջադրած պահանջներով, երբ գրականության զարգացման խնդիրները գիտվում էին հայ հասարակական-քաղաքական խնդիրների հետ միասնաբար, որովհետև «ինչպես ազգն է, ազգի

¹ «Հյուսիսային», 1859, № 9, էջ 689:

կյանքն է, այնպես և նորա պատմությունը, իսկ ինչպես պատմությունն է, այնպես է և նորա բանաստեղծությունը»²:

Նոր գրականության զարգացումը մեծ չափով պայմանավորվում էր նոր գրական լեզվի մշակմամբ, որը ժողովրդին հասկանալի լինելուց բացի, պետք է նշանավորվեր գրական բարձր մակարդակով: Հակառակ Պատկանյանի, որը լեզվի հարցում առաջնորդվում էր Կարամզինի «Գրե այնպես, ինչպես խոսում են, և խոսե այնպես, ինչպես գրում են» նշանաբանով, Նալբանդյանը հետևորդ էր Պուշկինի տեսակետին, որը բացառում էր խոսակցական լեզվի անփոփոխ ներդրումը գրականության մեջ»³: Այդ հայեցակետից էլ Նալբանդյանը քննադատում է Պատկանյանի «Նոր այբբենարանի» լեզուն, մի գիրք, «որ առաջին անգամ պիտի ողջունեն Հայոց մանուկը, որ չգիտեր դեռևս ընթեռնուլ»⁴:

Հայ գրողի առջև խնդիր է դրվում «գրել ժողովրդական լեզվով առանց ծառայանալու գավառական բարբառներին, միևնույն ժամանակ ամբողջ պահելով լեզվի ժողովրդականությունը, մշակել այդ լեզուն, ներս բերելով դորա մեջ նոր մարդավայել և արժանի եվրոպական անունի գաղափարներ, ահա այն մի հատիկ գործը, որով պիտո է պարապելին հոգիազգեսաց հեղինակները և թարգմանիչը մեր ազգի ուր և իցե»⁵: Այս առումով «Ռոբինզոն Կրուզոյի» Պատկանյանի թարգմանությունը, ըստ քննադատի, շահեկանորեն տարբերվում է իր լեզվով, առավել համապատասխանելով աշխարհաբար գրական լեզվի զարգացման սկզբունքներին: Ահա թե ինչու Նալբանդյանը ուրախությամբ է արձանագրում հայերեն լեզվով նոր գրքի հրատարակությունը, իբրև «մի բանականության վաստակ, այնպիսի զգեստով, որ հարմար էր մեր ժամանակի և մեր կյանքի պայմաններին»⁶:

Չնայած գրախոսությունների ոչ մեծ ծավալին, Նալբանդյանի գնահատումները դառնում են այն խոր և ձիշտ կուսումները, որոնք հետադաշում քննադատության մեջ պետք է զարգանային իբրև Պատկանյան գրողի արժեքավորման գիտական շափանիշներ: Այստեղ արդեն պատշաճ ուշադրության են արժանանում ազգային գրող, ժողովրդային գրականություն, հասարակական բովանդակություն և այլ բնորոշումներ, որոնցով պետք է առաջնորդվեր նոր ուղեգիծ ելած գրական քննադատությունը:

Եթե Պատկանյանի մասին եղած քննադատական գրականությունն իր ժամանակային տարածքի իմաստով բաժանենք 3 մասի, առաջին՝ 1855—1870, երկրորդ՝ 1870—1890 թթ. և երրորդ՝ 1900—1910-կան թթ., ապա առաջին հատվածում բարձրակետը մնում է Միքայել Նալբանդյանի քննադատությունը:

Նույն այդ ժամանակաշրջանին են վերաբերում «Մեղու Հայաստանիում», «Կռոսնկ հայոց աշխարհի» ամսագրում լույս տեսած գրախոսությունները, որոնք կարող են հետաքրքրել զուտ պատմական նշանակությամբ

² Նույն տեղում, էջ 696:

³ Տե՛ս Ա. շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Մ. Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, Երևան, 1955, էջ 112:

⁴ «Հյուսիսափայլ», 1858, № 5, էջ 417:

⁵ Նույն տեղում, էջ 420:

⁶ Նույն տեղում, էջ 417:

իբրև ժամանակի մամուլի արձագանքներ Պատկանյան բանաստեղծի մասին: Գրախոսությունների առիթը Մոսկվայում հրատարակված «Բանաստեղծությունք Գամառ-Քաթիպայի» ժողովածուն էր: Մինչ այդ Պատկանյանն արդեն հայտնի անուն էր, իր ժամանակի մեծ քաղաքացին, թե՛ իր հասարակական լայն գործունեությամբ և թե՛ համալգային մտքեր արթնացնող իր ստեղծագործությամբ: Նրա առաջին բանաստեղծություններն արդեն կրում էին իրենց մեջ ազգայինի բնորոշ առանձնահատկություններ՝ հայրենասիրական գաղափարների նպատակամիտվածություն, պոեզիայի քաղաքացիականություն, լեզվի անպաճույճ ժողովրդայնություն: Սակայն գրախոսություններում դեռևս թույլ են տարբերակվում նրա գործի այս էական կողմերը: Շեշտվում է Պատկանյան բանաստեղծի նշանակությունը ժամանակի հայ գրականության մեջ. «Այս գրքույկը, իբրև բանաստեղծական երկասիրությունք, մեր աշխարհիկ մատենագրության մեջ կարող է բռնել առաջնական տեղ թե՛ լեզվի կոկության և թե՛ մտքերի հասունության կողմանե»⁷: Այստեղ բարձր են գնահատվում նաև բանաստեղծի երգիծական գործերը, ուր «շատ կենդանությամբ արտահայտվում է նոցա վիճակը»: Եվ իբրև ապացույց բանաստեղծությունների «ընտիր լինելու», բերվում են «Վարդանի երգը», «Օտարուհի և հայ երիտասարդ», «Հայկ ու Լեոնին մոռանանք, եղբարք» ստեղծագործությունները:

Առավել պահպանողական է «Հայկական աշխարհի կոունկ» թերթի գրախոսը: Զերմ ու հիացական կարծիք հայտնելով բանաստեղծի հայրենասիրական քնարի մասին, նա վերապահությամբ է խոսում «Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկ» և «Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ» երգիծական բանաստեղծությունների մասին, հակառակ «Մեղու Հայաստանի» գտնելով, որ դրանք բնորոշ չեն հայ կյանքին: «Գամառ-Քաթիպայի բանաստեղծությունը,— գրում է հեղինակը,— կազմում է մի բացառական, բոլորովին առանձնապես նշանավոր երևույթ հայկական գրականության մեջ»⁸: Եվ շնայած այս ճիշտ նկատմանը, հետագա քննադատությունը ցույց է տալիս, որ գրախոսին անհասկանալի է մնացել Պատկանյանի հայրենասիրության կարևոր առանձնահատկությունը՝ «սիրել ատելով»: Այնինչ սա արգենդավանանք էր գրողի համար, որի ամբողջ ուշադրությունը բևեռված էր իր ժամանակակից, իրական հայ մարգու կյանքի վրա և պատմության հերոսական էջերին անդրադառնալով, նա ուներ մի նպատակ միայն՝ ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման ուղիների որոնումը:

Պատկանյանի ստեղծագործության մի այլ ոլորտն է լուսաբանվել Քերովբե Պատկանյանի հետազոտության մեջ: Խոսքը վերաբերում է Նախիջևանի բարբառով գրված պատմվածքներին ու հեքիաթներին, որոնք իբրև նմուշներ կցված էին Ք. Պատկանյանի՝ հայ բարբառների մասին ուսումնասիրությանը⁹: Ուշագրավ է, որ հետազոտողը դուրս գալով իր նյութի՝ բարբառի ուսումնասիրության սահմաններից, արժեքավոր սլարդաբանումներ է կատարում Ռափայել Պատկանյանի գեղարվեստական արձակի հատկանշա-

⁷ «Մեղու Հայաստանի», 1865, № 13, հոդվածն անստորագիր է:

⁸ «Հայկական աշխարհի կոունկ», 1865, № 8, էջ 366: Հոդվածն անստորագիր է:

⁹ «Материалы для изучения армянских наречий», вып. I. Говор нахичеванский, издал К. П. Патканов, СПб., 1875.

կան կողմերի մասին: Ընդգծվում է պատմվածքների բովանդակության իրական հիմքը՝ նահապետական բարքերի քայքայումը տնտեսական նոր հարաբերությունների աղդեցությամբ, հեղինակային պարզ և միաժամանակ բացառիկ արտահայտիչ մատուցումը, հոգեբանական նուրբ դիտումները: Այս դժերով էր բնորոշվում հայ արձակի նոր դեմքը, ձևավորվում դեպի ռեալիզմ տանող հետագա գեղարվեստական մտածողությունը: Քննադատին հաջողվել է իր սեղմ բնութագրումներով ներկայացնել Պատկանյանի արձակի կարճ ձևերի գաղափարական-գեղարվեստական ուրույն միտումները, որոնցից ամենակարևորը՝ ճշմարտացիության և բնականության պահանջը, նաև Քերովբե Պատկանյանի գեղագիտական կողմնորոշումն էր: Իր գրող-բարեկամին տված խորհուրդներում նա հետևողականորեն զարգացնում էր հավաստի գրելու գաղափարը. «Զափը միշտ ուշկումդ ունեցիր և էֆեկտի ետևեն մի քնկնիլ», — գրում էր նա իր նամակներից մեկում¹⁰: Այդ սկզբունքով էլ դրվատվում են նոր նախիջևանի կյանքի պատկերները. «Իր պատմվածքների բովանդակությունը, — գրում է Ք. Պատկանյանը, — նա փոխառնում է բուն կյանքից, նրա ամենասովորական արտահայտություններում..., իսկ մոտիվները, գլխավոր առմամբ, կայանում են նախիջևանի ոչ վաղ անցյալի, նրա նահապետական կյանքի շրջանի և ներկայի համեմատման մեջ... Բովանդակության բուն պարզությունը վառ լույսի տակ ցուցադրում է պ. Ախտամերկյանի՝ տաղանդի առանձնահատկությունները, նրա կարողությունը՝ հաղորդելու իր պատմվածքներին զարմանալի գրավչություն»¹²: Հետաքրքրական է Ք. Պատկանյանի նս մի դիտումը՝ գրողի և հերոսի փոխհարաբերության հարցը: Ըստ քննադատի, ստեղծագործության բնականությանը մեծապես նպաստում է հեղինակի եսի ընդգծված բացակայությունը, ընթերցողի աչքից նրա թաքնված մնալը: Ջուլվելով իր հերոսներին, ապրելով նրանց կյանքով ու բաժանելով նրանց աշխարհայեցությունը, գրողը կարողացել էր «այդ դեմքերի ճակատագրով կենդանի հետաքրքրել ընթերցողին, իսկ իրադրությունների բնականությունն ու նրբագեղ խոսքի ոչ արհեստականությունը մոռացնել են տալիս իրեն՝ հեղինակին»¹³: Ք. Պատկանյանը նախընտրելի է գտնում նաև հեղինակի ոճի սթափ արտահայտչաձևը՝ հեռու սենտիմենտալ զգացմունքայնությունից և միաժամանակ բնական հոգեբանական երանգների առկայությամբ: «Տհաճ քաղցր-մեղցրության և սենտիմենտալ տոնի բացակայությունը շահեկանորեն տարբերում են նրան նման բնույթի շատ գրողներից: Նրա մոտ ամեն ինչ արտահայտվում է հասարակ, զգաստ, բնական. և ուրախությունը և՛ վիշտը, և՛ մարդկային սրտի բոլոր հնարավոր զգացողությունները իրենց փոքրագույն նրբերանգներով»¹⁴:

Այսպիսով, քննադատը ոչ միայն բացահայտում է Պատկանյանի արձակի որոշակի առանձնահատկությունները, այլև մատնանշում է ժամանակի գրականագիտական մտածողության նոր ընթացքը, որի ուղիները սկիզբ էին առնում եվրոպական և ռուսական գրականագիտական դպրոցներից:

¹⁰ Մեջբերումը կատարված է Ս. Սարինյանի «Հայկական ողմանտիզմ» գրքից. էջ 342:

¹¹ Ռաֆայել Պատկանյանի գրական կեղծանուններից մեկն է:

¹² «Материалы для изучения армянских наречий», էջ XIV.

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

Ակնհայտ են դառնում նրա պատկերացումները կյանքի և գրականության փոխհարաբերության, հերոսների միջոցով հեղինակային գաղափարախոսության գեղարվեստական մարմնավորման, հերոսի հոգեբանական դրսևորումների ընդգծման կարևորության վերաբերյալ:

Պատկանյանի արձակի վիպագրական մասին է վերաբերում Հայկունու գրախոսությունը «Մեղու Հայաստանիում»: Հարազատ մնալով թերթի ազգային-պահպանողական ուղղությանը, զրախոսը դրվատում է Սյուլյուկի «Տիկին և նաժիշտ» վեպը, այն սահմաններում, որքանով վեպի գաղափարները համընկնում էին ընտանիքի սրբազործման՝ ազգության բարոյական հիմքերի ամրապնդման նպատակներին:

«Մեր բոլոր գործունեության ալֆա և օմեգան առ ժամս մեր ընտանիքը պիտի լինի. և մեր սրտնեռանդ աղոթքը նրա փրկության համար ևեթ պիտի մրմնջվի, ըստ բանաստեղծին թե՛ «Ընտանի՛ք, սեղան սրբության»¹⁵:

Այս տեսակետից էլ ազգային ղգացմունքի պատկանյանական ուժանտիկ բարոյախոսությունը մեծապես համապատասխանում է «Մեղուի» քննադատի գեղարվեստական ակնկալիքների ծրագրերին. «Ահա ձեզ բանաստեղծ, վիպասան, ահա ձեզ գեղարվեստ ու գեղարվեստական գրվածք:

Շատ, որքան կարելի է շատ տվեք մեզ, պարոններ, դուք այդպիսի վեպեր: Դրանք պիտի լինին անձրևների այն փոքրիկ կաթիլները, որոնք հայ գրականական անդաստանի վրա անընդհատ տեղալով, մի օր վերջապես կպարարտացնեն և պտղաբեր կկացուցանեն այդ երաշտահար անդաստանը»¹⁶: Սակայն Պատկանյանի վեպը զուտ ընտանեկան բարոյազանցության հատուցման քարոզ չէր: Նրա հիմնական նպատակը շարունակում էր մնալ ազգային սրբազործումն ու ազգային գաղափարներին նվիրաբերման սկզբունքը: Հավատարիմ ուժանտիկական վեպի կանխադրույթներին, հեղինակը վեպում ամեն ինչ ենթարկում է գաղափարական իդեալի կենսագործմանը:

Հերոսների սիրո ողբերգությունը բացատրվում էր ազգային բնավորության խաթարումներով, օտար միջավայրի բացասական ազդեցությամբ: Սոֆին բարոյական պատիժ-հատուցում է ստանում ազգուրացության, առաքինության, ազգային հատկանիշների ոտնահարման համար և իր խորտակված կյանքի միակ մխիթարությունը գտնում է ազգակիցներին նվիրվելու հաստատ որոշման մեջ: Հենց այս կետում է, որ բաժանվում են «Մեղու Հայաստանի» քննադատի հայացքները Պատկանյանի գաղափարական սկզբունքներից: Գրողի հայրենասիրության ազգային-աղատագրական պայքարի ծրագրերից հեռու էին թերթի ազգային-պահպանողական կողմնորոշումները: Այդ մտայնության արտահայտությունն էր նաև Հայկունու գրախոսությունը¹⁷: Կասկածի տակ առնելով հերոսուհու Վան գնալու նպատակը, քննադատը ղգուշարար խորհուրդ էր տալիս հասարակությանը հետ կանգնել «անշրջահայաց» քայլերից, «ցնորք և շաղիաղիանք» համարելով այդ գաղափարներ:

¹⁵ «Մեղու Հայաստանի», 1884, № 35:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն սկզբունքներից էլ Հայկունին քննադատում էր Բաֆֆու, Պոռչյանի, Տեր-Սարգսենցի ստեղծագործությունները: Տե՛ս Լ. Ասմարյան, Հայ գրական քննադատությունը 70—80-ական թվականներին, Երևան, 1979, էջ 67—70:

րը: «Տաճկահայաստանը մի դժբախտության երկիր է, պետք է զգուշությամբ և երկյուղածությամբ ոտք դնել այդ երկրի վրա: Պետք է լավ ճանաչած և ուսումնասիրած լինել այդ երկարամյա հիվանդի վիճակը: Կան հիվանդություններ, որոնք այս ու այն սովորական դեղերով չեն բժշկվում: Կան հիվանդներ էլ, որոնց համար, նույնիսկ իրանց ազգակցաց և մտերմաց ներկայությունն անախորժ է»: Լյս հայացքով էլ նա քննադատում է վեպի վերջաբանը, հարելով պահպանողական մտայնության գաղափարաբանությանը:

Հայկունու գրախոսությունը գրվել է 1884 թ., այսինքն վերաբերում է Պատկանյանի ստեղծագործության գնահատումների երկրորդ շրջանին, երբ գրողի վաստակը արդեն արժանացել էր ոչ միայն համընդհանուր ճանաչման, այլև դրվել էին այդ վաստակի գիտական ուսումնասիրման հիմքերը: Դրան մեծապես նպաստել էր Ռ. Պատկանյանի երկերի թարգմանությունը ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներով, նրա վրա դարձնելով նաև ռուս ու եվրոպացի հայագետների ուշադրությունը: Ուշագրավ է, որ այս շրջանում առավել հստակ է գիտակցվում Պատկանյանի ստեղծագործության համազգային բովանդակությունը, որի ապացույցն էին նաև արևմտահայ քննադատության արձագանքները մամուլում: Լյս իմաստով հատկապես նաև է Կարապետ Տյուրյանի հոդվածը «Հանդես ամսօրյա» ամսագրում, ուր նա «Ռուսահայոց գրականություն» վերտառությամբ հոդվածաշարով հրատարակում էր դրական դիմանկարներ: Ելնելով հայ գրականության զարգացման ընդհանուր օրինաչափություններից, Կ. Տյուրյանը, հայ քննադատության մի շարք նշանավոր ներկայացուցիչների հետ միասին (Վրթ. Փափազյան, Լրփ. Լրփիարյան և այլք) պաշտպանում էր ազգի երկու հատվածների մերձեցման, նրանց դարավոր մշակույթի կապերի ամրապնդման գաղափարը: Դրական դիմանկարների նրա շարքը (Ռ. Պատկանյան, Բաֆֆի, Սունդուկյան և այլք) նույնատակ ոմներ արևմտահայ հասարակությանը ներկայացնել խոշորագույն արևելահայ գրողներին և վերջիններիս ստեղծագործության թալանաշունչ հայրենասիրությամբ ոգեշնչել ազգակիցներին: Ռ. Պատկանյանի ստեղծագործական ուրույն անհատականությունը իր շատ կողմերով միանդամայն որոշակիորեն կարող էր ծառայել այդ նպատակին և քննադատին հաջողվում է խորաթափանց հայացքով բացահայտել գրողի արժեքն ու նշանակությունը: Տյուրյանի հոդվածն առանձնանում է մինչ այդ Ռ. Պատկանյանի մասին գրվածներից իր ամբողջական բնույթով: Քննադատը ներկայացրել է Ռ. Պատկանյանին և՛ իբրև քաղաքացի-բանաստեղծի, և՛ իբրև արձակագրի: Չեն մոռացվել նաև գրողի երգիծական բնույթի երկերը, որոնք Տյուրյանը հնարավոր է գտնում համեմատելու ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Բուալոյի գործերի հետ: Ուշագրավ է նրա դիտողությունը Պատկանյանի լեզվի մասին՝ իբրև նրա բանաստեղծական նկարագրի կարևոր հատկանիշ. «Պատկանյանի գրվածոց մի մեծ արժանիքն ալ այն նորասքանչելի պարզությունն է, որո շնորհիվ յուր երկերը դիտնականե սկսած մինչև ոամիկը՝ ամեն ընթերցողին գյուրահասկանալի են և այս աննշան դեր չի խաղար ժողովրդականություն ստանալու գործի մեջ»¹⁸: Իսկ ամենակարևորը, որ Տյուրյանը դիտում է Պատկանյանի գրական գործունեության մեջ, գրողի հասարակական-քաղաքական նպատակամղվածությունն է, «ժողո-

¹⁸ «Հանդես ամսօրյա», 1887, № 6, էջ 85:

վերջյան կենաց հանգամանքներին ու որպիսությանը» ծառայելը: Պատկանյանի գրական մեծությունը քննադատը չափում է նրա «լայնածավալ և զորեղ ժողովրդականությանը, անբավ հարգի և անհողդողդ համբավով», մի արժանիք, որ չափանիշ է դառնում իր ժամանակի և ժողովրդի հետ գրողի ունեցած սերտ կապի մեջ: Պատճառներից քննադատն ընդգծում է բանաստեղծի՝ ժողովրդի նվիրական իղձերի ու զղացումների թարգման լինելը. «Նորա քնարի ձայները զարթուցին զժողովուրդը խոր թմրութենե, շարժեցան քնած հոգիները և ժողովուրդը տեսավ յուր երգիչը՝ Գամառ-Քաթիպան, այն երգիչը, որ կոչված էր կենդանացնել տասնյակ դարերե ի վեր լուծ համարացած Գողթան երգիչները: Գամառ-Քաթիպայի քնարը, նորա ամեն մի խոսքը՝ լինել նա իրիստ հանդիմանություն կամ անպայման գովեստ ժողովրդի համար շարք մի մտածողությանց դուռ բացավ, փոփոխակի մերթ ուրախ, մերթ տխուր»¹⁹:

Տյուրյանի հողվածք Պատկանյանի ստեղծագործության արժեքավորման կարևոր ընկալումներից է, արևմտահայ մամուլի արձագանքներից թերևս ամենահնչեղը²⁰:

Ռափայել Պատկանյանի լայն ժողովրդականության հարցն են արծարծում նաև «Մասիս» թերթը, «Բաղմավեպ» և «Հայք» ամսագրերը: Վերջինս աչքի է ընկնում մի ուշագրավ առանձնահատկությամբ ևս: Քննելով Պատկանյանի գեղարվեստական ժառանգության արժեքը պատմական ժամանակի մեջ, «Հայքի» հողվածագիրը շեշտը դնում է բանաստեղծի քաղաքացիական դավանանքի վրա, ընդգծում նրա ստեղծագործության հասարակական հնչողությունը:

«Նա չէր այն բանաստեղծներեն, որք կդրեն սքանչացնելու համար ընթերցողներն կամ ցուցնելու իրենց տաղանդն: Դամառ-Քաթիպա կտաղաչափեր կրթելու, համոզելու, շարժելու համար զհայ ժողովուրդն»²¹:

Ռափայել Պատկանյանի ստեղծագործության մեկնաբանման և գնահատման հետաքրքիր երևույթներ են նաև ռուս և օտարազգի գրականագետների ուսումնասիրությունները: Պատկանյանը օտարազգի հետազոտողներին ներկայացել է նախ և առաջ իր ազգային ինքնատիպությամբ, գեղարվեստական մտածողության ազգային բնավորության դրսևորմամբ:

Անցյալ դարի 80—90-ական թթ. և հետագա տարիներին հայ ժողովրդի և նրա արվեստի ու գրականության հանդեպ աճող հետաքրքրության վկայություններն են Յու. Վեսելովսկու, Վ. Բրյուսովի, Արթուր Լալստի, Դեոն Ռուդոլֆի, Կարլ Բլալբերգի, Ժ. Հանուշի ուսումնասիրությունները Պատկանյանի մասին: 1886 թ. Լալպցիգում «Հայկական դրադարան» մատենաշարով լույս տեսած Ռ. Պատկանյանի գործերի արձագանքներն են Ա. Լալստի, Ժ. Հանուշի հողվածները: Արթուր Լալստը, հայ գրողի ստեղծագործական ձևավորման վրա իրավացիորեն տեսնելով գերմանական ոճմանտիկների ազդեցությունը, այնուհետև ընդգծում է նրա տաղանդի զարգացման ինքնատիպ ազգային ուղղությունը: Գերադասություն տալով Պատկանյան բանաստեղծին, Լալստը գրում է. «Դոքա հրապուրիչ են իրանց վսեմ թռիչքով,

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Կ. Տյուրյանի հողվածն արտատպվել է «Արձագանքում» (1887, № 39):

²¹ «Հայք», Նյու-Յորք, 1893, № 1, էջ 6 (հողվածն անստորագիր է):

շողշողուն գույների պերճությամբ, գեղարվեստական ձևով և ըստ մեծի մասին բուն արևելյան երանգով»²²:

Պատկանյանի ստեղծագործության ազգային բովանդակությունն է ընդգծում նաև Ժ. Հանուշը. «Նա իբրև բուն ազգային մատենագիր է ներկայանում մեզ, թե՛ յուր բանաստեղծությունների և թե՛ յուր ժողովրդական վիպասանության մեջ: Նորա քնարերգությունը նվիրված է նախ և առաջ հայրենիքին, ինչպես և հայոց ազգի բերկրությանը և ցավերին, և նորա երգերից շատերը ժողովուրդը երգում է»²³: Անշուշտ, այս հոգվածները, իրենց բնույթից ելնելով, գրողին չեն ներկայացրել իր ամբողջական նկարագրով, սակայն դիպուկ նկատումներով բացահայտել են նրա ստեղծագործության ամենաբնորոշ կողմերը:

Ռուս նշանավոր գրականագետ Յու. Վեսելովսկու ուսումնասիրությունները հայ մշակույթի և դրականության մասին հատկանշվում են հայ ժողովրդի պատմության, գրականության, անցյալի և ներկայի բազմակողմանի և խոր իմացությամբ: Իր ուսումնասիրություններում նա բազմիցս ընդգծում էր այն փաստը, որ հայ գրականության ինքնատիպ գաղափարագեղարվեստական բովանդակությունն ըմբռնելու համար մշտապես պետք է ելակետ ունենալ նրա պատմական ճակատագրի առանձնահատկությունները: Պատկանյանի մասին Վեսելովսկու հետազոտություններն արժեքավոր են առաջին հերթին իբրև այդ պատմական հայացքի և նրա ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունների խոր ընկալման արտահայտություններ: Գրականագետը առաջիններից մեկն էր, որ Պատկանյանի ստեղծագործությունը քննում էր ոչ թե իբրև առանձին երևույթ, այլ սերտ կապի մեջ իր հետնորդների և հաջորդների հետ: Գրականության ընթացքի այս կարևոր օրինաչափության ընդգծման հետ մեկտեղ, Վեսելովսկին տեսնում է Պատկանյան բանաստեղծի ուրույն անհատականությունը և դրանով էլ բացատրում նրա լայն ժողովրդականությունն ու մեծ ազդեցությունը հայ գրականության հետագա ընթացքում:

Պատկանյանի հանրաճանաչությունը գրականագետը համեմատում է Բաֆֆու վեպերի բուռն ընդունելության հետ: Վեսելովսկին ճիշտ է նկատում Պատկանյանի ստեղծագործական այն առանձնահատկությունը, որ նա առաջին գործերով արդեն հանդես եկավ իբրև լրիվ ձևավորված գեղարվեստագետ թե՛ իր վարպետությամբ, թե՛ գաղափարների կայունությամբ: Խոսելով «Արաքսի արտասուքի» մասին, գրականագետը դիտում է այն իբրև գրողի այդ առանձնահատկության դասական նմուշ. «...ապշեցուցիչ ուժեղ գործ, որը և այժմ, 50 տարի անց ցնցող տպավորություն է թողնում և վկայում է դրական գործունեության դեռևս վաղ շրջանում բաճառատեղծի դրսևորած արտասովոր ձիրքի մասին»²⁴: Պատկանյանի պոեզիայի գաղափարական հագեցվածությունը ընդգծելիս քննադատը զուգահեռ է տանում նրա և Նեկրասովի ստեղծագործական ուղղությունների միջև: Ինչպես և Նեկրասովը,

22 «Արձագանք», 1885, № 26, էջ 366: Արտատպված է գերմանական «Das Magazin für die Litteratur des In- und Auslandes» հանդեսից:

23 «Արձագանք», 1887, № 5, էջ 67:

24 Ю. А. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры, Ереван 1972, էջ 204:

հայ բանաստեղծն էլ, ըստ Վեսելովսկու, քննադատական, մերկացնող գրականության գործուն կողմնակիցներից էր: «Իսկ ինչպես էին կարողանում նրանք միաժամանակ սիրել իրենց երկիրը, հպարտանալ նրա անցյալով, հավատալ նրա ապագային, այդ հատու դիմակադերժողները, խիստ դատավորները...»²⁵:

Վեսելովսկու ուսումնասիրությունը կատարված է ռուս առաջադեմ քրննադատության հարուստ ավանդույթների ոգով և շատ կողմերով ուսանելի է իբրև Պատկանյան արվեստագետի գրականագիտական մեկնաբանություն:

Նույն այդ ժամանակաշրջանին են վերաբերում նաև հայ քննադատության փորձերը նորովի և ամբողջական հայացքով ներկայացնելու ազգի մեծ բանաստեղծին: «Մշակ», «Լուսա», «Բաղմավեպ», «Նոր Դար», «Տարազ», «Մուրճ» և այլ պարբերականներում հանդես եկած քննադատներ Գր. Զալխուշյանի, Խ. Մալումյանի, Լեոյի, Գար. Սնգիրյանի, Լ. Ճաղարբեկյանի, Գ. Բալասյանցի, Ստ. Լիսիցյանի, Ստ. Մալխասյանի հոդվածները ժամանակի հայ քննադատության բնորոշ արտահայտություններն են: Մեծ գրողի վաստակի ամբողջական գնահատման առաջին փորձերից է նաև Գր. Զալխուշյանի «Հայ բանաստեղծությունը հանձինս Ռ. Պատկանյանի» ուսումնասիրությունը ռուսերեն լեզվով, որ տպվել էր Դոնի Ռոստովում, բանաստեղծի գրական գործունեության 35-ամյա հոբելյանի առթիվ²⁶:

1880—90-ական թթ. գրական շարժումը սահմանել էր ինքնատիպ գրական քննադատության համակարգը, որը, որդեգրելով անցյալ տասնամյակներում ձևավորված դեմոկրատական ուղղության ավանդույթները, առավել խորացրեց դրանք բուն գրականագիտական հետազոտության ակզբունքներով: Ստեղծագործության հասարակական նշանակալիությունը, ժողովրդական կյանքի պատկերման հարադատությունը, սոցիալական և քաղաքական երևույթների մեջ թափանցելու ունակությունը դառնում են տաղանդի գնահատման կարևորագույն չափանիշները: Քննադատությունը առաջնահերթ նշանակություն է տալիս գրողի դավանանքի գաղափարական, հոգեբանական դոմինանտներին՝ իբրև որոշիչ գործոն նրա գեղարվեստական աշխարհի բացահայտման համար: Նոր ուղղության՝ ռեալիզմի խնդիրներին ղուգրնթաց, ժամանակի քննադատությունը շարունակում էր իր տեսադաշտում պահել անցյալ տասնամյակի գրականության ուսումնասիրման հարցերը, դրանք ներկայացնելով արդիական հասարակական-գեղագիտական հայեցակետով: Այդպիսի ընկալման արդյունք էր նշանավոր բանասեր-քննադատ Գր. Խալաթյանի ուսումնասիրությունը Ռ. Պատկանյանի մասին: Այն տպվել է իբրև առաջաբան՝ 1893 թ. Պետերբուրգում հրատարակված «Ընտիր երկասիրություններ» երկհատորյակին, այնուհետև արտատպվել է «Նոր Դարի» նույն թվականի 195, 196 համարներում: Ուսումնասիրությունը թեև կրում է «Համառոտ կենսագրական նկարագիր» վերնագիրը, սակայն և՛ իր ծավալով, և՛ արժարժված հարցերի բովանդակությամբ դուրս է գալիս ոչ միայն վերնագրի համեստ սահմաններից, այլև հնչում է իբրև ծանրակշիռ խոսք պատկանյանագիտության տվյալ փուլում:

²⁵ Նույն տեղում, էջ 193:

²⁶ Гр. Чалхушян, Армянская поэзия в лице Р. Патканяна. Литературный эскиз по поводу 35-го юбилея, Ростов-на-Дону, 1886.

Հեղինակը իր առջև նպատակ է ունեցել գրողի կյանքի և պատմական շրջանի հեռապատկերով բացել նրա գործունեության նշանակությունը, ցույց տալ նրա գերը հայ նոր գրականության զարգացման ընթացքում: Պատկանյանի բաղմաշերտ ստեղծագործության քննությամբ հեղինակը հանգում է եղրակացությունների, որոնք կարևոր ելակետային դրույթներ են դառնում գրողի հետագա ուսումնասիրության գործում: Այսպես, օրինակ, խոսելով նրա «կանխագույն երկերի նշանակության մասին», հալաթյանը դրանք արժանի է գտնում «խորին ուշադրության», քանի որ «այդ գրվածները մի անգամ ընդմիշտ որոշ ուղղություն տվին բանաստեղծին..., մի ուղղություն, որին հաժապարիմ մնաց նա մինչև իր մահը... և որոնք դարագլուխ կազմեցին մեր գրականության պատմության մեջ իրենց առաջնակարգ կարևորությամբ»²⁷: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում քննադատի մտքերը Պատկանյանի արձակի մասին: Այստեղ իրական կյանքի ճանաչողության հետ միասին ընդգծվում է գրողի «ղարմանալի դիտողականությունը և այն խորին հոգեբանական անալիզը մարդկային սրտի նուրբ շարժումներին, որով պարծենալ կարող է ամեն մի նշանավոր եվրոպական վիպագիր»²⁸: Պատկանյանի արձակի այս առանձնահատկությունը իսկապես նոր երևույթ էր հայ վեպի պատմության մեջ և հալաթյանն առաջինն էր, որ դրանում տեսավ հայ վեպի զարգացման նոր որակը, հոգեբանական արտահայտության իմաստով: Զուգնալով իր նախորդը հայ արձակում, Պատկանյանի վիպագրությունն ինքը հիմք ծառայեց հայ հոգեբանական վեպի զարգացման, դառնալով նախորդը այնպիսի գրողների, ինչպիսիք էին Շիրվանզադեն և Նար-Դոսը:

Հալաթյանը Պատկանյանի գրական-հասարակական մեծությունը իբրև ազգային բանաստեղծի բացատրում է նրա ողջ ստեղծագործության «ներքին պարունակությամբ»՝ հայրենասիրությամբ. «42 տարվա անխոնջ և անընդհատ գրականական գործունեության միջոցին—բոլոր յուր գրվածքներում՝ շափաբերական, թե արձակ, գրականական թե գավառական լեզվով, նա միշտ արձագանք է եղած ազգային կյանքի մտավոր և բարոյական երևույթներին և կենսական բարձր շահերին ու պահանջներին: Ամենը, ինչ որ մտածել ուղգացել են, ինչով որ ապրել ու տանջվել են յուր ժամանակակիցները կենդանի կերպով և գեղարվեստորեն պատկերացրած է նրա երկերի մեջ... Գամառ-Քաթիպան, այդ մարմնավորյալ ազգային ինքնաճանաչությունը, դարձավ դարավոր ճնշման և հալածման կենդանի բողոք, որ արժարժվեց աշխարհի մի ծայրից մյուս ծայրը և շատ սրտերից արյուն քամեց»²⁹: Իր ազդին ու հայրենիքին բոլորանվեր ծառայության մեջ էլ քննադատը տեսնում է գրողի մեծ կոչումն ու «նշմարիտ քանաստեղծությունը, որ երբեք չի մոռացվի, քանի կհնչե հայկյան բարբառը»³⁰:

Հալաթյանի ուսումնասիրությունը, ժամանակի քննադատական մտքի բնորոշ արտահայտությունը լինելով, հանդիսանում է գրողի ստեղծագործու-

²⁷ Ի. Պատկանյան, Ընտիր երկասիրություններ, Պետերբուրգ, 1893, հատ. 1, էջ ԺԸ:

²⁸ Նույն տեղում, էջ ԻԴ:

²⁹ Նույն տեղում, էջ ԻԶ:

³⁰ Նույն տեղում, էջ ԻԸ:

թյան յուրացման ուրույն, սեփական ընկալման արդյունք: Երևույթը հատկանշական է Պատկանյանի ստեղծագործությանն անդրադարձող այս շրջանի քննադատներին:

Ստ. Լիսիցյանը «Տարազում», Գ. Արծրունին, Խ. Մալումյանը «Մշակում», Հ. Ճաղարբեգյանը «Նոր դարում» և այլք, նորից ու նորից բարձրացնում են Պատկանյանի գործի հասարակական, գրական, «բարոյական-կրթիչ» նշանակության հարցերը, լուսաբանում գրողի գեղարվեստագաղափարական սկզբունքները, մեծարում նրա վաստակն ու հայրենանվեր կյանքը: Դա հասկանալի էր, քանի որ այդ հոգվածների մեծ մասը գրված էին բանաստեղծի անդառնալի կորստի ծանր տպավորության տակ՝ 1892—93 թթ., և այդ հանգամանքն անպայման որոշակի էմոցիոնալ արտահայտություն էր տվել դրանց բովանդակությանը: Սակայն կորստի ցավը այս հոգվածներում միացած է գրողի թողած արժեքի բարձր գիտակցման հետ և պաթետիկ ոճը չի բացառում զնահատումների գրականագիտական մակարդակը: Պատկանյանի ստեղծագործությունն իբրև իր դարաշրջանի տրամաբանական պահանջի և գրողի մեծ տաղանդի համադիր արտահայտությունն դիտելով, Արծրունին, իրեն հատուկ ոգեշունչ պատկերավորությամբ գրում էր. «Առհասարակ այն ազգերը միայն վկայում են իրանց կենդանության մասին, որոնք իրանց միջից ծնեցնում են հանճարներ ուղիղ այն ժամանակ, երբ անհրաժեշտ պահանջ կա այդ հանճարների մեջ... ուղիղ այն ըոպեին, երբ հարկ է զգացվում հանճարի ներկայության ու նրա կենդանացնող, վերածնեցնող խոսքի մեջ»³¹: Այնուհետև հրապարակախոս-քննադատը հասարակական-քաղաքական իրադրության բարդ հանգամանքներում որոնում և գտնում է Պատկանյանի գաղափարական դավանանքը, տեսնում նրան համախոհ գաղափարակիցների շարքում, հնի և նորի «անջրպետի սահմանազլխին» իբրև «նոր գաղափարի վարդապետ-տրուբադուր»: «Ազգային բանաստեղծ» բնորոշումը, որ ստացել էր Պատկանյանը դեռևս իր կյանքի օրոք, հաճախ է կրկնվում նաև այս շրջանի հոգվածներում, սակայն ոչ միշտ է տարբերակվում իր բուն իմաստով: Երբեմն էլ, նկատի ունենալով նրա ստեղծագործության լայն տարածումը, քրննադատներից ստանում է «ժողովրդական» բնորոշումը: Հարցի գիտական մոտեցման օրինակ է Եղիշե Մաղաթյանի «Ազգի երգիչը — Ռափայել Պատկանյան» ուսումնասիրությունը՝ տպագրված «Մուրճ» ամսագրում: Պարզելու համար, թե «ու՜նի՞» նա արդյոք այն ամենը, ինչ պահանջվում է մի ճշմարիտ ազգային բանաստեղծ լինելու համար», քննադատը խնդրին մոտենում է համակողմանիորեն: Ստեղծագործողի ազգային բնորոշումը, ըստ քննադատի, ենթադրում է նրա անխզելի կապը ազգային կյանքի բոլոր դրսևորումների հետ, իսկ դրա համար անհրաժեշտ է դիտվում, որ յրողը «տոգորվի հասարակական շահերով, ուշադիր լինի դեպի ազգային կյանքի յուրաքանչյուր դարկերակը, ապրի ազգի հետ, մի խոսքով լինի իր ժամանակի և իր հայրենիքի հարադատ և ընտիր որդին»³²: Այս տեսակետից էլ Մաղաթյանը փորձում է բացահայտել, թե որքանով է հումապատասխանում Պատկանյանի

31 «Մշակ», 1892, № 99: Նույն միտքն է արտահայտել Ռ. Պատկանյանի՝ իր ժամանակի արդյունքը լինելու մասին նաև լեռն 1901 թ. «Մշակում» տպված «Ռափայել Պատկանյան» ուսումնասիրության մեջ:

32 «Մուրճ», 1892, № 11, էջ 1662:

դործունեությունը ազգային բանաստեղծի իդեալին: «Մեր գրողներից ոչ ոքի դործունեության մեջ այնքան որոշ և պայծառ չի մարմնանում ազգային հայ բանաստեղծի իդեալը, որքան 'Դամառ-Քաթիպայի գործունեության մեջ»³³. այս հաստատ համոզմամբ սկսելով իր ուսումնասիրությունը, Մադաթյանն այնուհետև մանրազնին քննության ենթարկելով գրողի ստեղծագործությունը ևրկու տարբեր շրջաններում, ցույց է տալիս նրա գործունեության այն կողմերը, որոնք բավարար չեն գրողի ազգային բնորոշման համար: Դրանցից առաջինը, որին անդրադառնում է նա, ժողովրդական կյանքի անբավարար ճանաչողությունն է: «Որքան էլ ընդհանրապես օգտակար և խրատական լինեն զանազան տեղերում և գանաղտն ժամանակ Պատկանյանի ստացած տպավորությունները, հարազատ ազգային կյանքից չէին գալիս, այլ կա՛մ օտար, կա՛մ ազգային կյանքի պատահական հոսանքներից»³⁴: Մադաթյանը նշում է նաև գրողի տեսական հայացքների կայուն համակարգի բացակայությունը: «Տպավորությունների ու դիտողությունների խայտաբղետ հոսանքի մեջ կարծես նա չի կարողացել կենտրոնանալ: Առողջ և աղնիվ բնազդումը գրական և հասարակական սկզբունքների տեղն է բռնում:

Գեղարվեստական հոտառությունը, բարվո և ճշմարտության զգացումը, միացած բուռն հայրենասիրության հետ՝ բանաստեղծի միակ ղեկավարն են այդ շրջանում», — գրում է նա, լուսաբանելով գրողի 1850—60-ական թթ. ստեղծագործությունը: Քննադատի դիտողությունները որևէ չափով միտում չեն ունեցել գրողի աշխատի նսեմացման կամ թերադնահատման, այլ եղել են արդյունք քննական աննախապաշար վերաբերմունքի և զգաստ հայացքի, որի շնորհիվ առավել հստակ է բնութագրվել գրողի գործի հասարակական արժեքը:

Դարասկզբի սոցիոլոգիական քննադատության ներկայացուցիչներից մեկը՝ Բ. Իշխանյանը Պատկանյանին դիտում է լիբերալիզմի սկզբունքների արտահայտիչ, նույն այդ սկզբունքները վերագրելով նաև Մ. Նալբանդյանի, Կ. Արծրունու, Բաֆֆու և այլոց հայացքներին: Ավելին, Ռ. Պատկանյանը և Ս. Շահազիզը իրենց գասակարգային պատկանելությունն են ձեռք բերում՝ դառնալով «մանուկ բուրժուազիայի», կամ «առևտրական խավի ու բարձրակարգ արհեստավորության իդեոլոգներ»: Այս ակնհայտ սխալները ժամանակին քննադատվեցին հենց նույն՝ սոցիոլոգիական քննադատության ներկայացուցիչ Թադևոս Ավդալբեգյանի կողմից: Թ. Ավդալբեգյանը համոզիչ չի գրտնում հեղինակի փաստարկումները, հակադրվում է նրա «գասակարգայնացման միապաղաղ իդեոլոգիայի» դրույթին, կատարելով կարևոր ուղղում հայ գրականության հասարակական գաղափարաբանության դեմոկրատական լիցքի մասին: «Հայ վերածնության գրականությունը, — գրում է նա, — միայն մի դասակարգի միապաղաղ իդեոլոգիա չէ... այս գրականությունն իր տարբեր ներկայացուցիչների բերանով արտահայտում է ոչ միայն մանուկ բուրժուազիայի, այլ նաև հասարակական ուրիշ խմբերի, սրանց միջից ղլխավորապես գյուղացիության, հատկապես իբրև տնտեսական կատեգորիայի, իդեալները»³⁵:

33 Նույն տեղում, էջ 1661:

34 Նույն տեղում, 1893, № 4, էջ 609:

35 «Սուրհանդակ», 1911, № 287:

Սոցիոլոգիական մեթոդը, Պատկանյանի գնահատության հարցում ակնհայտ ծայրահեղությունների հետ միասին, վկայում է գրողի ընկալման նոր փուլի օրինաչափությունները: Քննադատության առաջընթացը գիտական մեկնաբանման նոր հասարակակտն գաղափարների լույսի տակ լայնացնում է գրողի նշանակության հարցերը, որոշում նրա լինելիությունը ժամանակների մեջ: Մեկ անգամ ևս հաստատվում է Ռաֆայել Պատկանյանի տեղագործական գերագույն սկզբունքը՝ «ազգության և հայրենիքի գաղափարը», «հասարակական կովոդ գործիչի մարտական տարերքը, քննադատողի, մերկացնողի, խարաբանողի հուժկու պաթոսը»³⁶:

Նորեւանական տարեթվերը հաճախ դառնում են յուրատեսակ աստիճանափուլ՝ գրականության և արվեստի մեծ գործիչների պատմական գերի ճանհատման, նոր իմաստավորման առումով: Ռաֆայել Պատկանյանի ստեղծագործությունն այսօր արժեքավորվում է ոչ միայն իբրև անցյալի փառահեղ հուշարձան, այլև արդիականության հոգևոր կյանքի երևույթ: Դրա վկայությունը նրա շրոդ երգերի արձագանքն է ժամանակների մեջ:

ТВОРЧЕСТВО РАФАЭЛА ПАТКАНЯНА В ОЦЕНКЕ ЛИТЕРАТУРНОЙ КРИТИКИ ЕГО ВРЕМЕНИ

Кандидат филол. наук Л. Г. МУРАДЯН

(Резюме)

Творчество выдающегося поэта-патриота Рафаэла Патканяна — особое явление в новой армянской литературе, поэтому закономерен большой интерес, который проявляла армянская критика к его творчеству. Произведения Р. Патканяна широко привлекались для историко-литературных обобщений. В критической литературе о поэте дается развернутая характеристика его поэзии, выявляется ее роль и значение, прослеживается восприятие и влияние писателя в последующем историческом процессе. В статьях Микаэла Налбандяна, Керовбе Патканяна, Григора Халатянца, Григора Арцруни, К. Тюрjana, а также Юрия Веселовского, Артура Лейста и др. представлены основные пути развития творчества Р. Патканяна и раскрыты идейные и художественные особенности его поэзии. Научное толкование в свете новых социальных идей привело к расширению вопросов, связанных с изучением наследия писателя, к ценным теоретическим и историко-литературным обобщениям, определило место Р. Патканяна в плеяде зачинателей новой армянской поэзии, охарактеризовало его творчество как одну из ярких и примечательных страниц в истории поэзии и общественного сознания.

³⁶ Ք. Ի շ խ ա ն յ ա ն, Հասարակական գաղափարները Ռ. Պատկանյանի և Ս. Շահազիզի քանաստեղծությունների մեջ, էջ 118: